ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 2.35
N ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-07/18

ք. Երևան «26» 03 2018թ.

<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ-ը ի դեմս գլխավոր տնօրեն Ա.Գասպարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և <<Էկոմիքս>> ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Ս.Գասպարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 339 786 (երեք հարյուր երեսունինը հազար յոթ հարյուր ութսունվեց) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին **հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1)**, **իսկ էլեկտրոնային** գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am **հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև** հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն **սյունակները**, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի

մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ	**<<Էկոմիքս>> ՍՊԸ**
ք.Երևան-42, Ի. Գասպարյան 33	**ք.Երևան, Լենինգրադյան31/1 բն.28**
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ	**<<ՎՏԲ-Հայաստան>> Բանկ ՓԲԸ**
ԱՇԻԲ «Զվարթնոց» մաս.	**Հ/Հ 16045050508800**
ՀՎՀՀ 01216144	**ՀՎՀՀ 01255701**
Գլխ. տնօրեն	**տնօրեն**
----------**Ա.Գասպարյան**	----------**Ս.Գասպարյան**
/ստորագրություն/ Կ.Տ	/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 1
2018 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի
«26» 03
2.35

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

հրավերով նախ չափհամ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվան և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափ միավ	միավոր գինը/<< դրամ	ընդհանուր գինը/<< դրամ	ընդ քա նակ	<< դրամ մատակարարման հասցեն	ենթա կա քա նակը	Ժամկետը**
				Ապրանքի							
1	44511360/1	Գործիքների տեղափոխման միջոցներ Bul Max	Bul Max Tools Թուրքիա	Գործիքների պլաստմասե պայուսակ , որը պետք է ունենա հանովի-դնովի դարակ ինչպես նաև առանձնացված լինի մանր դետալներ լցնելու դարակով, ունենա հարմարավետ բռնակ, 2 կողմից փակելու հնարավորություն և մոտավորապես 286x280x554սմ չափսերի :	հատ	8496	8496	1	ք.Երևան Ի.Գասպարյան-33 <<Հայաէրոնավիգացիա >>ՓԲԸ պահեստ	1	30.04.2018
4	44511400/6	Գործիքների մասեր Gepard	SKIPFIRE.LIMITED Չինաստան	Հղկաթղթի գլխադիրներ բոլգարկային ամրացնելու համար ,տրամագիծը 125մմ	հատ	546	2730	5	ք.Երևան Ի.Գասպարյան-33 <<Հայաէրոնավիգացիա >>ՓԲԸ պահեստ	5	30.04.2018
5	44511220/2	Տարատեսակ ձեռքի գործիքներ՝	Starex Tools Թուրքիա	Գործիքների բանալիների հավաքածու երկկողմանի, որից մի կողմը մանեկադարձային(гаечный)	հատ	27496	54992	2	ք.Երևան Ի.Գասպարյան-33 <<Հայաէրոնա	2	30.04.2018

		բանալիների հավաքածու Fanga-Starex		մյուս կողմը ագուցիկ(накидной) , երկաթյա, բարձր որակի, 7մմ – 32մմ					վիգացիա >>ՓԲԸ պահեստ		
6	44521210/2	Փականների մասեր Kale	Kale.CO Թուրքիա	Փականների մասեր՝ եվրոդռան ալյումինե ծխնի, գույնը՝ սպիտակ, երկարությունը՝ 10սմ	զույգ	1396	8376	6	ք.Երևան Ի.Գասպարյան-33 <<Հայաէրոնավիգացիա >>ՓԲԸ պահեստ	6	30.04.2018
7	44511330/3	Պտուտակահաններ STAREX	STAREX. Tools Թուրքիա	Պտուտակահանների հավաքածու , տափակ և ձևավոր(фигурный), յուրաքանչյուրից մինիմում 4 հատ տարբեր չափերի :	լրակազմ	6896	6896	1	ք.Երևան Ի.Գասպարյան-33 <<Հայաէրոնավիգացիա >>ՓԲԸ պահեստ	1	30.04.2018
8	44511340/1	Գայլիկոնի սայրեր EXPLOIT	EXPLOIT Թուրքիա	Գայլիկոնի սայրեր՝ 12 մմ երկարութունը 60 սմ բետոնե պատ ծակելու համար	հատ	5496	10992	2	ք.Երևան Ի.Գասպարյան-33 <<Հայաէրոնավիգացիա >>ՓԲԸ պահեստ	2	30.04.2018
10	44511220/3	Տարատեսակ ձեռքի գործիքներ՝ մածկիչ STARTULL	SKIPFIRE.LIMITED Չինաստան	Լայնությունը՝ 1հատ- 9սմ - անոց, 2 հատ-25սմ-անոց, , բռնակը՝ կապրոնից, չափսերը՝ շեղբի բարձրությունը՝10 սմ, չժանգոտվող մետաղից :	հատ	1996	5988	3	ք.Երևան Ի.Գասպարյան-33 <<Հայաէրոնավիգացիա >>ՓԲԸ պահեստ	3	30.04.2018

12	44521110/1	Փականներ Extra	Extra Չինաստան	Կողպեք կախովի երկաթից, լայնությունը՝ 65-70մմ, բարձրությունը՝ 50-60մմ , հաստությունը՝ 15-20մմ, կապանքի տրամագիծը՝ 10-12մմ	հատ	1796	5388	3	ք.Երևան Ի.Գասպարյան-33 <<Հայաէրոնավիգացիա >>ՓԲԸ պահեստ	3	30.04.2018
13	44511110/1	Բահեր	ООО Севастополь ՌԴ	Բահ սվինաձև ամուր մետաղից՝ 2մմ հաստությունից ոչ պակաս, փայտյա պոչով, 140սմ երկարությամբ՝ 4սմ տրամագծով	հատ	1596	3192	2	ք.Երևան Ի.Գասպարյան-33 <<Հայաէրոնավիգացիա >>ՓԲԸ պահեստ	2	30.04.2018
17	44511210/1	Ձեռքի սղոցների շեղբեր	ООО Севастополь ՌԴ	Շերտասղոց մետաղ և այլն կտրելու համար: Առանցքների միջև հեռավորությունը՝ 30 սմ, Լայնքը՝ 1.3մմ	հատ	100	6200	62	ք.Երևան Ի.Գասպարյան-33 <<Հայաէրոնավիգացիա >>ՓԲԸ պահեստ	62	30.04.2018
19	44511340/5	Գայլիկոնի սայրեր Orient	Orient TOOLS Թուրքիա	Գայլիկոնի սայրեր՝ պոբեդիտե 6 հատ-5մմ, 6հատ-6մմ, 4 հատ-7մմ,	հատ	346	5536	16	ք.Երևան Ի.Գասպարյան-33 <<Հայաէրոնավիգացիա >>ՓԲԸ պահեստ	16	30.04.2018

24	44511100/1	Ձեռքի գործիքներ ВОЛАТ	SKIPFIRE.LIMITED Չինաստան	Կծաքցան մոնտաժային, դիէլեկտրիկ բռնակով , երկարությունը՝ 150 մմ, փաթեթավորումը՝ գործարանային,	հատ	1596	4788	3	ք.Երևան Ի.Գասպարյան-33 <<Հայաէրոնավիգացիա >>ՓԲԸ պահեստ	3	30.04.2018
27	44511260/1	Հղկաթուղթ Gepard	SKIPFIRE.LIMITED Չինաստան	Հղկաթուղթ թերթիկավոր 125մմ Ø	հատ	546	5460	10	ք.Երևան Ի.Գասպարյան-33 <<Հայաէրոնավիգացիա >>ՓԲԸ պահեստ	10	30.04.2018
28	44511220//7	Տարատեսակ ձեռքի գործիքներ՝ ձեռքի լապտեր JAZZWAY	JAZZWAY Չինաստան	Պլաստմասսե պատյանով, լայնությունը՝ 125մմ, բարձրությունը՝ 140մմ, երկարությունը՝ 240մմ, լամպերի քանակը՝ 19 Led + 16 Led, լուսավորման հեռավորությունը՝ 70 մ, բազմաֆունկցիոնալ լուսադիոդային լապտեր պտտվող բռնակով, հենարանով և տեղափոխման գոտիով,աշխատանքային 4 ռեժիմով, երկմակարդակ լուսավորություն՝ (19 Led, 16 Led)	հատ	9896	19792	2	ք.Երևան Ի.Գասպարյան-33 <<Հայաէրոնավիգացիա >>ՓԲԸ պահեստ	2	30.04.2018
33	44511400/9	Գործիքների մասեր GEPARD	SKIPFIRE.LIMITED Չինաստան	Կտրող քար մետաղ կտրելու համար , չափերը 230x22.23x1.9 մմ	հատ	996	29880	30	ք.Երևան Ի.Գասպարյան-33 <<Հայաէրոնավիգացիա >>ՓԲԸ պահեստ	30	30.04.2018

34	44511100/2	Ձեռքի գործիքներ STARTULL	SKIPFIRE.LIMITED Չինաստան	Բահ նախատեսված ծյուն մաքրելու համար: Աշխատանքային (մաքրող մասը) մակերեսը՝ 35-45սմ, հաստությունը 1.5մմ-ից ոչ պակաս, պոչը փայտե, երկարությունը՝ 130-133սմ: Թվով 4 բահերի մաքրող մասերը լինեն պլաստմասե, իսկ թվով 10 բահերի մաքրող մասերը լինեն մետաղյա :	հատ	6396	89544	14	<<Հայաէրոնա վիգացիա >>ՓԲԸ	14	30.04.2018
38	44511340/2	Գայլիկոնի սայրեր INGCO	INGCO TOOLS Չինաստան	Գայլիկոնների հավաքածու համապատասխան տուփով, որտեղ պետք է պարունակեն առնվազն 1; 2; 3; 4; 5; 6; 7; 8; 9; 10; 12 մմ չափերի երկաթ ծակելու համար նախատեսված գայլիկոններ:	լրակազմ	7496	7496	1	ք.Երևան Ի.Գասպարյան-33 <<Հայաէրոնա վիգացիա >>ՓԲԸ պահեստ	1	30.04.2018
48	44511230/1	Դուր STARTULL	SKIPFIRE.LIMITED Չինաստան	Դուրերի հավաքածու տարբեր չափերի՝ ¼ “, ½” , ¾” .1 “	լրակազմ	6996	6996	1	ք.Երևան Ի.Գասպարյան-33 <<Հայաէրոնա վիգացիա >>ՓԲԸ պահեստ	1	30.04.2018
49	44511330/2	Պտուտակահաններ ВОЛАТ	SKIPFIRE.LIMITED Չինաստան	Պտուտակ երկկողմանի սայրով մի կողմը ձևավոր(фигурный) մի կողմը տափակ, երկարությունը 16-20 սմ, բռնակը դիելեկտրիկ, իսկ մեջի սայր բռնող հատվածը մետաղական, 2 հատի սայրերի լայնությունը 5-6մմ, 1 հատինը 2-3մմ	հատ	896	2688	3	ք.Երևան Ի.Գասպարյան-33 <<Հայաէրոնա վիգացիա >>ՓԲԸ պահեստ	3	30.04.2018
50	44511320/1	Խարտոցներ կամ քերիչներ՝	EXPLOIT Չինաստան	Նրբախարտոց , նաթվիլ պատրաստված է պողպատից, Լրակազմը ներառում է 10 հատ	լրակազմ	4496	8992	2	ք.Երևան Ի.Գասպարյան-33	2	30.04.2018

		նրբախարտոց EXPLOIT		տարբեր կոնֆիգուրացիաների նրբախարտոցներ					<<Հայաէրոնա վիգացիա >>ՓԲԸ պահեստ		
55	44521110/2	Փականներ AKSEL	AKSEL Չինաստան	Փական չհրկիզվող պահարանի, (Մետաղյա դռան փական) , լեզվակները կլասիկ , չափերը 109.5*104*18	հատ	4796	23980	5	ք.Երևան Ի.Գասպարյա ն-33 <<Հայաէրոնա վիգացիա >>ՓԲԸ պահեստ	5	30.04.2018
56	44511370/1	Գործիքների հավաքածու BUL MAX	BUL MAX TOOLS Չինաստան	Գործիքների արկղ չափսերը՝ 20x20x40սմ, նյութը՝ պլաստմասից, փակվող, բռնակով, կափարիչի վրա փոսերով հատուկ մանր դետալների համար	հատ	4496	4496	1	ք.Երևան Ի.Գասպարյա ն-33 <<Հայաէրոնա վիգացիա >>ՓԲԸ պահեստ	1	30.04.2018
57	44511400/8	Գործիքների մասեր GEPARD	SKIPFIRE.LIMITED Չինաստան	Մետաղ կտրելու համար երկաթահատ սկավառակ, չափերը՝ 125x22.2x1.2մմ :	հատ	396	792	2	ք.Երևան Ի.Գասպարյա ն-33 <<Հայաէրոնա վիգացիա >>ՓԲԸ պահեստ	2	30.04.2018
58	44511400/4	Գործիքների մասեր GEPARD	SKIPFIRE.LIMITED Չինաստան	Բոլգարկայի կտրող սկավառակ (փոքր) մետաղ կտրելու համար, չափերը 125x22.23մմ	հատ	396	7920	20	<<Հայաէրոնա վիգացիա >>ՓԲԸ	20	30.04.2018
60	44511220/6	Տարատեսակ ձեռքի գործիքներ՝ փայտի պոչ	<<	1 հատ-կացինի, 1 հատ-քլունգի, 1 հատ-գուրզիի , 3 հատ-բահի	հատ	696	4176	6	ք.Երևան Ի.Գասպարյա ն-33 <<Հայաէրոնա վիգացիա >>ՓԲԸ պահեստ	6	30.04.2018

62	44511260/2	Հղկաթուղթ NIKON	NIKON CO Չինաստան	Հղկաթուղթ 150մմ Ø	հատ	100	4000	40	ք.Երևան Ի.Գասպարյան-33 <<Հայաէրոնավիգացիա >>ՓԲԸ պահեստ	40	30.04.2018

ԳՆՈՐԴ

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
Երևան-42, Ի. Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ «Զվարթնոց» մաս.
ՀՎՀՀ 01216144

Գլխ. տնօրեն

----------Ա.Գասպարյան
/ստորագրություն/ Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

<<էկոմիքս>> ՍՊԸ
ք.Երևան, Լենինգրադյան31/1 բն.28
<<ՎՏԲ-Հայաստան>> Բանկ ՓԲԸ
Հ/Հ 16045050508800
ՀՎՀՀ 01255701
տնօրեն

----------Ս.Գասպարյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի
«26» 03
2.35

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												<< դրամ
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	44511360/1	Գործիքների տեղափոխման միջոցներ					8496	8496	8496	8496	8496	8496	8496	8496	8496
4	44511400/6	Գործիքների մասեր					2730	2730	2730	2730	2730	2730	2730	2730	2730
5	44511220/2	Տարատեսակ ձեռքի գործիքներ՝ բանալիների հավաքածու					54992	54992	54992	54992	54992	54992	54992	54992	54992
6	44521210/2	Փականների մասեր					8376	8376	8376	8376	8376	8376	8376	8376	8376

7	44511330/3	Պտուտակահաններ					6896	6896	6896	6896	6896	6896	6896	6896	6896
8	44511340/1	Գայլիկոնի սայրեր					10992	10992	10992	10992	10992	10992	10992	10992	10992
10	44511220/3	Տարատեսակ ձեռքի գործիքներ՝ մածկիչ					5988	5988	5988	5988	5988	5988	5988	5988	5988
12	44521110/1	Փականներ					5388	5388	5388	5388	5388	5388	5388	5388	5388
13	44511110/1	Բահեր					3192	3192	3192	3192	3192	3192	3192	3192	3192
17	44511210/1	Ձեռքի սղոցների շեղբեր					6200	6200	6200	6200	6200	6200	6200	6200	6200
19	44511340/5	Գայլիկոնի սայրեր					5536	5536	5536	5536	5536	5536	5536	5536	5536
24	44511100/1	Ձեռքի գործիքներ					4788	4788	4788	4788	4788	4788	4788	4788	4788
27	44511260/1	Հղկաթուղթ					5460	5460	5460	5460	5460	5460	5460	5460	5460
28	44511220//7	Տարատեսակ ձեռքի գործիքներ՝ ձեռքի լապտեր					19792	19792	19792	19792	19792	19792	19792	19792	19792

33	44511400/9	Գործիքների մասեր					29880	29880	29880	29880	29880	29880	29880	29880	29880
34	44511100/2	Ձեռքի գործիքներ					89544	89544	89544	89544	89544	89544	89544	89544	89544
38	44511340/2	Գայլիկոնի սայրեր					7496	7496	7496	7496	7496	7496	7496	7496	7496
48	44511230/1	Դուր					6996	6996	6996	6996	6996	6996	6996	6996	6996
49	44511330/2	Պտուտակահաններ					2688	2688	2688	2688	2688	2688	2688	2688	2688
50	44511320/1	Խարտոցներ կամ քերիչներ՝ նրբախարտոց					8992	8992	8992	8992	8992	8992	8992	8992	8992
55	44521110/2	Փականներ					23980	23980	23980	23980	23980	23980	23980	23980	23980
56	44511370/1	Գործիքների հավաքածու					4496	4496	4496	4496	4496	4496	4496	4496	4496
57	44511400/8	Գործիքների մասեր					792	792	792	792	792	792	792	792	792
58	44511400/4	Գործիքների մասեր					7920	7920	7920	7920	7920	7920	7920	7920	7920

60	44511220/6	Տարատեսակ ձեռքի գործիքներ՝ փայտի պոչ					4176	4176	4176	4176	4176	4176	4176	4176	4176
62	44511260/2	Հղկաթուղթ					4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: ** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ԳՆՈՐԴ

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
Երևան-42, Ի. Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ «Զվարթնոց» մաս.
ՀՎՀՀ 01216144

Գլխ. տնօրեն

----------Ա.Գասպարյան
/ստորագրություն/ Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

<<Էկոմիքս>> ՍՊԸ
ք.Երևան, Լենինգրադյան31/1 բն.28
<<ՎՏԲ-Հայաստան>> Բանկ ՓԲԸ
Հ/Հ 16045050508800
ՀՎՀՀ 01255701
տնօրեն

----------Ս.Գասպարյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____

_____

հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ_____

_____

հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին .

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Մատակարարված ապրանքների					
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
Վաճառողի անվանումը
պայմանագրի կնքման ամսաթիվը
պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն